

**ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Թ. Զ. ԱՎԱԳՅԱՆ

Ինքնասպանության հասցնելու հանցակազմը նախատեսված է բոլոր միութենական հանրապետությունների քրեական օրենսգրքերում: Հայկական ՍՍՀ-ում Քր. օր.-ի 104 հոդվածի համաձայն մինչև հինգ տարի ժամկետով պատժվում է մեղավոր անձից նյութական կամ այլ կախման մեջ գտնված անձին ինքնասպանության կամ դրա փորձին հասցնելը, որ կատարվում է տուժողի նկատմամբ դաժան վերաբերմունքի կամ նրա անձնական արժանապատվության սխտեմատիկ ստորացման միջոցով (մաս առաջին), և մինչև երեք տարի ժամկետով պատժվում է սխտեմատիկ հալածանքի, զրպարտության, վիրավորանքի միջոցով այն անձին ինքնասպանության կամ դրա փորձին հասցնելը, որը չի գտնվել մեղավորից նյութական կամ այլ կախման մեջ (մաս երկրորդ):

Ինքնասպանության հասցնելու հասարակական վտանգավորությունն այն է, որ մեղավոր անձը ոտնձգություն է կատարում անմիջականորեն սովետական մարդու կյանքի դեմ՝ հասցնելով անձի կյանքին այնպիսի վնաս, որը ոչնչով չի կարելի լրացնել:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը բնորոշվում է, ամենից առաջ, մեղավոր անձի ակտիվ գործողություններով:

Չափազանց բաղձաղան են այն հատկանիշները, որոնք մտնում են դաժան վերաբերմունքի ու անձնական արժանապատվության սխտեմատիկ ստորացման հասկացության մեջ, և դրանցից ոչ մեկը չի կարող դիտվել որպես համընդհանուր հատկանիշ: Չնայած քրեաիրավական նորմայի դիսպոզիցիայում հանցագործության կատարման եղանակները տրվում են ընդհանրացված ձևով, բայց դրանք ենթադրում են դաժանության և ստորացուցիչ վերաբերմունքի բոլոր հնարավոր դրսևորումները:

Այն թե ինչու չի կարելի սահմանել, օրինակ, ծեծի «մինիմում» և «մաքսիմում» և դրան համապատասխան դատական գործ հարուցել: Մինչդեռ անվերապահ ձևով առաջ է քաշվում այն զրույթը, որ «ծեծելու եղակի դեպքերը չեն կարող դիտվել իբրև դաժան վերաբերմունք, որի հետևանքը եղել է ինքնասպանությունը»¹: Սակայն ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանի՝ քրեական գործերով դատական կոլեգիայի այն որոշումից², որ վկայակոչվում է տվյալ դեպքում, այդպիսի եղբակացություն բոլորովին չի բխում: Օրվովի վերաբերմունքը չի կարող դիտվել իբրև դաժան վերաբերմունք ոչ թե այն սլատճտոով, որ նա

¹ «Комментарий к Уголовному кодексу РСФСР 1960 г.», изд-во Ленинградского университета, 1962, стр. 221.

² См. «Сборник постановлений Президиума и определений Судебной коллегии по уголовным делам Верховного Суда РСФСР (1957—1959 г.)», Госюриздат, М., 1960, стр. 184.

միայն երկու անգամ է կուլել կնոջ հետ և այդ հոդի վրա ծեծել նրան, այլ այն պատճառով (և դա ունի որոշիչ նշանակություն), որ, ինչպես ցուցմունք են տվել վկաները, Օուրվր կնոջ հետ ապրելիս է եղել հաշտ և նախկինում նրա կողմից կնոջ նկատմամբ դաժան վերաբերմունքի դեպքեր չեն եղել: Հետևաբար, գործողությունը, որպես հանրորեն վտանգավոր արարք, բնութագրելու համար կարևոր նշանակություն ունի մեղավոր անձի վարքի դրսևորումների ամբողջ համախմբությունը, այն կոնկրետ պայմաններն ու հանդամանքները, որոնցում դրսևորվել է այդ վարքը:

Ինքնասպանության հասցնելու համար քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, որի տասնվեց տարին լրացել է մինչև հանցագործության կատարումը (Հայկական ՍՍՀ-ի Քր. օր., հ. 10):

Այս ընդհանուր պահանջը, որ ներկայացվում է յուրաքանչյուր հանցագործության սուբյեկտին, բավարար է Քր. օր.-ի 104 հոդվածի 2-րդ մասի համար, և պատասխանատվություն կրում են այն մեղսունակ անձիք, որոնք հասել են օրենքով սահմանված տարիքին:

Արարքը Քր. օր.-ի 104 հոդվածի 1-ին մասով որակելու համար հանցագործության ընդհանուր սուբյեկտի այդ հատկանիշները բավարար չեն, անհրաժեշտ է նաև, որ մեղավոր անձն օժտված լինի այնպիսի հատկություններով, որոնք հիմք են տալիս նրանից նյութական կամ այլ կախման մեջ համարելու տուժողին: Հետևաբար, օրենսդիրը, նկատի ունենալով հանցագործության հատուկ սուբյեկտի հատկանիշը կադմոդ որոշ սպեցիֆիկ հատկություններ, սահմանափակում է այն անձանց շրջանակը, որոնք ինքնասպանության հասցնելու համար ենթակա են պատասխանատվության ՀՍՍՀ Քր. օր.-ի 104 հոդվածի 1-ին մասով³:

ՌՍՖՍՀ-ի, Վրացական, Ղազախական և Լիտվական ՍՍՀ-ների քրեական օրենսգրքերը խոսում են քննարկվող հանցագործության միայն հատուկ սուբյեկտի մասին, իսկ էստոնական ՍՍՀ-ի Քրեական օրենսգրքը նկատի ունի հանցագործության ընդհանուր սուբյեկտը:

Նյութական կախում առկա է այն դեպքերում, երբ մի անձ գտնվում է մի ուրիշ անձի խնամքի տակ կամ նրանից ստանում է էական նյութական օժանդակություն: «Այլ կախում» դոյություն ունի ամուսինների փոխհարաբերության մեջ, պետի և ենթակայի փոխհարաբերության մեջ (պաշտոնական կախում), դասախոսի և ուսանողի, ուսուցչի և աշակերտի, քննիչի և քննության տակ դտնվող անձի փոխհարաբերություններում և այլն:

ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների Քրեական օրենսգրքության հիմունքների 3-րդ հոդվածի (Հայկական ՍՍՀ-ի Քր. օր., հ. 3) համաձայն քրեական պատասխանատվության և պատժի ենթակա է միայն այն անձը, որը մեղավոր է հանցագործության կատարման մեջ, այսինքն՝ զիտավորյալ

3 Մ. Ի. Ուզունյանը գտնում է, որ անձին հանցագործության հատուկ սուբյեկտ ճանաչելու դեպքում նեղանում է հանցագործության սուբյեկտի բուն հասկացությունը (տե՛ս Մ. Ի. Ուզունյան, Հանցագործության սուբյեկտը, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1964, էջ 11): Այդպիսի եզրակացության հետ, սակայն, դժվար է համաձայնել: Չկա հանցագործության սուբյեկտի հասկացություն նեղ և լայն իմաստով, ընդհանուր և հատուկ սուբյեկտները նույնական հասկացություններ են, և հանցագործության հատուկ սուբյեկտի լրացուցիչ հատկությունները օրենսդիրը սահմանել է միայն այն անձանց շրջանակը սահմանափակելու նպատակով, որոնք կարող են պատասխանատվություն կրել որոշակի հանցագործության համար:

կերպով կամ անզգուշորեն կատարել է քրեական օրենքով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք:

Դիտավորությունն ու անզգուշությունը կատարվող հանրորեն վտանգավոր արարքների և դրանց հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ մեղավոր անձի հոգեկան վերաբերմունքի ձևերն են:

Կրիմինալիստների մեծ մասը գտնում է, որ ինքնասպանության հասցնելն ուղղակի դիտավորությամբ չի կատարվում, և այդպիսի գեպերում կյանքից զրկելը սկստք է որակել իբրև սպանություն, որը տարբերվում է միայն կատարման հատուկ եղանակով:

Առաջ քաշելով ալիպիսի դրույթ՝ հեղինակները, սակայն, այն չեն հիմնավորում ինքնասպանության հասցնելու հանցակազմի գիսպողիցիայի վերլուծությամբ կամ թե իբրև ապացույց վկայակոչում են⁵ միևնույն Կոստոզովի մեղադրական գործը, որով նա մեղավոր է ճանաչվել գիտավորյալ սպանության մեջ:

Կոստոզովը, ալիմենտ վճարելուց խուսափելու նսյատակով, համոզել էր Մուրատովային, որը հղի էր նրանից, միասին ինքնասպանություն գործել և սարալում պատրաստել էր երկու օղակ: «Նրբ Մուրատովան կախվեց առաջինը, մեղադրյալ Կոստոզովը շկախվեց՝ «հիմար» համարելով Մուրատովայի վարմունքը և նույնիսկ խուսափելով նրա կյանքը փրկելու համար օգնություն ցույց տալուց, նա իրենից հեռացրեց Մուրատովայի ձեռքը, որով նա կախվելուց հետո բռնել էր նրան՝ ղրանել իսկ օգնություն հայցելով իր կյանքը փրկելու համար, բայց Կոստոզովը ոչ միայն օգնեց նրան ազատվելու օղակից, այլև դեռ ասաց՝ «Ալիպես են սովորեցնում քեզ նմաններին»:

ՌՍՖՍՀ-ի Գերագույն դատարանը գտել էր, որ «ամբողջ վերահիշյալը... վկայում է, որ Կոստոզովը նախօրոք կշռադատված մտադրությամբ Մուրատովայի նկատմամբ կատարել է դիտավորյալ սպանություն ստոր մղումներով, ինքնասպանության համոզելու միջոցով՝ խոստանալով ինքն էլ կախվել նրա հետ, ստեղծելով համապատասխան իրադրություն մտադրված իրականացնելու համար, որպիսի արարքը պարունակում է Քր. օր.-ի 196 հոդվածով նախատեսված հանցագործության բոլոր հատկանիշները»:

Սակայն Կոստոզովի արարքը որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված դիտավորյալ սպանություն որակելը, մեր կարծիքով, ճիշտ է: Մուրատովան եղել է մեղսունակ անձ, իսկ մեղսունակ անձին ինքնասպանության համոզելը հանցագործություն չէ: Ըստ ՌՍՖՍՀ-ի Քր. օր.-ի (1926 թ.) 141 հոդվածի 2-րդ մասի այդ հանցագործությունը կարող է կատարվել անշափտ հասի

⁴ Տե՛ս օրինակ՝ Մ. Դ. Շարгородский, Преступления против жизни и здоровья, Юриздат, М., 1948, стр. 68; С. В. Бородин, Квалификация убийства по действующему законодательству, изд-во «Юридическая литература», М., 1966, стр. 238; М. К. Аниянц, Ответственность за преступления против жизни по действующему законодательству союзных республик, изд-во «Юридическая литература», М., 1964, стр. 175 и др.

⁵ Տե՛ս օրինակ՝ Մ. Դ. Շարгородский, Преступления против жизни и здоровья, стр. 66; Н. И. Загородников, Преступления против жизни по советскому уголовному праву, Госюриздат, М., 1961, стр. 234; «Комментарий к Уголовному кодексу РСФСР 1960 г.», стр. 221.

⁶ Տե՛ս «Судебная практика Верховного Суда СССР», 1927, № 10, стр. 21.

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

նկատմամբ կամ այն անձի նկատմամբ, որն ականջատորեն ընդունակ չէ հասկանալու իր կատարածի էությունը կամ նշանակությունը, կամ թե ղեկավարելու իր գործողությունները: Ուստի և Մուրատովային ինքնասպանության համոզելը, ինչպես և մյուս գործողությունները, որոնք պայմաններ են ստեղծել տուժածի ինքնասպանության համար, չի կարող որակվել իրրե գիտավորչալ սպանություն: Կոսոգովի գործողությունները չեն պարունակել նաև ինքնասպանության հասցնելու (Քր. օր.-ի 111 հոդվածի 1-ին մաս) հանցակազմի հատկանիշները, դրանք չեն ևղել դաժան (կամ դրա նման) վերաբերմունք:

Կոսոգովը ցանկացել է Մուրատովայի մահը, բայց չի նախատեսել, թե ինչ, ձևով կարող է հասնել դրան: Դա միայն ցանկություն է եղել, և պրակտիկորեն Կոսոգովը մինչև Մուրատովայի կողմից իր կյանքի վրա ձեռք բարձրացնելը հանրորեն վտանգավոր գործողություններ չի կատարել: Միայն Մուրատովայի կախվելուց հետո է նա գիտակցել, որ խուսափելով նրա կյանքը փրկելու համար օգնություն ցույց տալուց, կարող է իրագործել իր հանցագործ կամբը՝ Մուրատովայի մահվան ցանկությունը, և գործողության մեջ է գրել իր այդ կամբը: Կոսոգովի արարքը պարունակել է ՌՖՖՍՀ-ի Քր. օր.-ի (1926 թ.) 156 հոդվածով նախատեսված հանցագործության կազմի բոլոր տարրերը՝ «անձին ականջատորեն առանց օգնության թողնելը, երբ նա գտնվում է կյանքի համար վտանգավոր վիճակում, իր անօղնականության պատճառով... զրկված է ինքնապահպանության միջոցների ձեռնարկելու հնարավորությունից, այն դեպքում, եթե առանց օգնության թողնողը... հնարավորություն է ունեցել օգնություն ցույց տալու...»:

ՌՖՖՍՀ-ի Քրեական օրենսգրքի գիտա-պրակտիկ մեկնարանություն»-ում այն եզրակացությունը, որ ինքնասպանության հասցնելը սուբյեկտիվ կողմից կարող է կատարվել ուղղակի գիտավորության, հաստատվում է այն հանգամանքի վկայակոչմամբ, որ տվյալ հոդվածով նախատեսվող պատիժը «զգալիորեն ավելի ծանր է անդգույշ սպանության համար նախատեսված պատիժից, և ինքնասպանության հասցնելու այդ համեմատաբար մեծ վտանգավորությունը կարող է կայանալ հենց... տուժողի մահը ցանկանալու մեջ: Դրա հետ մեկտեղ, նույնիսկ ուղղակի գիտավորության ինքնասպանության հասցնելը, ականջատորեն, պակաս վտանգավոր է, քան գիտավորչալ սպանությունը, քանի որ մեղավոր անձն անմիջականորեն մարդուն չի զրկում կյանքից, իսկ տուժողը կարող է իրեն հասցվող զրկանքներից ու տառապանքներից ազատվել այլ միջոցով, քան ինքնասպանությունն է»⁹:

Ինքնասպանության հասցնելու սուբյեկտիվ կողմի նման վերլուծությունը, սակայն, չի բացահայտում կատարվող արարքի նկատմամբ անձի հոգեկան վերաբերմունքի բովանդակությունը, քանի որ քրեական օրենքի սանկցիան չի կարող չափանիշ ծառայել մեղքի ձևերի, մասնավորապես գիտավորության ընդլայնման համար: Այդպիսի ղեպքում ստացվում է, որ, օրինակ, լուրաբանչյուր հանցագործության, որի կատարման համար սահմանված է հինգ տարվանից ոչ պակաս ժամկետով ազատազրկում, պետք է համարվի ծանր հանցագործություն, թեպետև պետք է ընդունել, որ ինքնասպանության հասցնելը ծանր հանցագործությունների շարքից դուրս թողնելը հիմնավորված չէ:

⁹ «Научно-практический Комментарий Уголовного кодекса РСФСР», изд. 2-е, изд-во «Юридическая литература», М., 1964, стр. 262.

եթե, ընդամին, հաշվի առնենք ծանր հանցագործության հասկացության կառուցվածքը և որոշ հանցակազմեր (չարամիտ խուլիղանության և այլն) դրամեջ մտցնելու փաստը: Ընդհակառակը, տվյալ հանցագործության սուբյեկտի կողմի մասին եզրակացություն կատարել թույլ են տալիս միայն դրա հանցակազմի արտաքին ու ներքին կողմերը, որոնք ձևակերպված են քրեաիրավական նորմայի ղիսպոզիցիայում: Հանրորեն վտանգավոր գործողության արդեն միայն ուրվագծումը, այն է՝ գաժան վերաբերմունք կամ տուժողի անձնական արժանապատվության սիստեմատիկ ստորացում, վկայում է մեղավոր անձի կողմից դրանք ուղղակի դիտավորությամբ կատարելու հնարավորության մասին: Ուղղակի դիտավորությունը պարզվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ հանդամանքների, մեղավոր անձի գործողությունների բնույթի վերլուծությունից: Հենց դրանից էլ ելնում են Հայկական ՍՍՀ-ի դատարանները, երբ լուծում են այն հարցը, թե մեղավոր անձն ուղղակի դիտավորությամբ է գործել, թե ոչ: Ինքնասպանության հասցնելու դեպքում ուղղակի դիտավորության ձևով մեղքի հնարավորությունը ցույց է տալիս ՍՍՀՄ-ի Գերագույն դատարանի դատական պրակտիկան: Այսպես, բեկանելով Զեոնիխի գործով կայացված մեղադրական դատավճիռը՝ ՍՍՀՄ-ի Գերագույն գատաբանի քրեական գործերի գծով դատական կոլեգիան իր որոշման մեջ ընգգծել է, որ «...ամբաստանյալի գործողության կամ անդործության և վրա հասած հետևանքի միջև հավաստի պատճառական կապի աուկայության գեպքում անհրաժեշտ է նաև ասլացուցել ամբաստանյալի մեղքը, այսինքն՝ նրա մոտ դիտավորության (ընդգծումը մերն է — Ռ. Ա.) կամ անզգուշության աուկայությունը: Ժողովրդական գատարանն այդ հարցին չի անգրադարձել: Սակայն, դատելով ըստ գործի հանգամանքների, Զեոնիխը չի ունեցել ոչ միայն գիտավորություն նեգոգյաւին հասցնելու ինքնասպանության, ալլև անզգուշություն, քանի որ նա չէր կարող և լարտավոր չէր կանխատեսել իր միանգամայն օրինական գործողությունների այդպիսի բոլորովին բացառիկ հետևանքները»¹⁰:

Մեղավոր անձից նյութակսւն կամ այլ կախման մեջ գտնվող անձին ինքնասպանության կամ դրա փորձին հասցնելը, ըստ Քր. օր.-ի 104 հոդվածի 2-րդ մասի, պատժվում է ադատազրկմամբ մինչև հինգ տարի ժամկետով, իսկ այդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ նույն արարքը, որ կատարում է այն անձը, որի նկատմամբ տուժողը չի գտնվել նյութական կամ այլ կախման մեջ, պատժվում է ադատազրկմամբ մինչև երեք տարի ժամկետով¹¹:

Մեր կարծիքով, ինքնասպանության հասցնելու դեմ մղվող պայքարին կնպաստեր հարաբերականորեն որոշակի սանկցիաներում, լլատժի աուավելագույն չափից բացի, նաև նվազադույն չափի սահմանում: Պատժաչափը կարող է սահմանվել իբրև ադատազրկում երկու տարուց մինչև հինգ տարի ժամ-

¹⁰ «Социалистическая законность», 1948, № 10, стр. 61.

¹¹ Ադրբեյջանական ՍՍՀ-ում կախյալ անձին ինքնասպանության կամ դրա փորձին հասցնելը պատժվում է ադատազրկմամբ մինչև յոթ տարի ժամկետով, իսկ Տաջիկական ՍՍՀ-ի Քր. օր.-ը մինչև յոթ տարի ժամկետով ադատազրկմամբ պատժում է նույն արարքների համար, եթե դրանք կատարվում են կնոջ նկատմամբ ֆեոդալական կենցաղի հողի վրա կամ անչափահասի նկատմամբ: Ինքնասպանության կամ դրա փորձին հասցնելու համար, եթե դա կատարվել է այն անձի նկատմամբ, որը մեղավոր անձից նյութական կամ այլ կախման մեջ չի գտնվել, կիրդիգական ՍՍՀ Քր. օր.-ը նախատեսում է ադատազրկում մինչև մեկ տարի ժամկետով, ինչպես նաև ուղղիչ աչխատանք նույն ժամկետով:

կետով (1-ին մասով) և մեկ տարուց մինչև երեք տարի ժամկետով (2-րդ մասով)։

Քննարկվող հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները, ինչպես հայտնի է, ուղղակի նշված են հոդվածի դիսպոզիցիայում։ Նկատի ունենալով այդպիսի հանցակազմերը՝ Ի. Ի. Կարպեցը գրում է. «Այն դեպքերում, երբ վնասակար (ծանր) հետևանքների առկայությունը նախատեսվում է բուն իսկ հանցակազմի մեջ, այդ հետևանքների բնույթը նշանակություն ունի մեղավոր անձին պատժի առավելագույն չափի նշանակելու համար։ Ընդ որում, միանգամայն անթույլատրելի է անտեսել հետևանքների ծանրությունը՝ նախապատվությունը տալով մեղմացուցիչ հանգամանքներին, որոնք կոնկրետ պայմաններում շատ ավելի փոքր նշանակություն ունեն, քան հանցագործի հասցրած վնասակար հետևանքները»¹²։

Ահա թվում է, պատժի նշանակման հարցում նման մոտեցումը որոշ հակասության մեջ է դնելով պատժի անհատականացման սկզբունքի հետ, որ նշանակում է ամբաստանյալի նկատմամբ քրեական օրենքը կիրառել՝ հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության (հակաիրավականության) աստիճանը, հանցագործի անձը և պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները։ Իսկ օրենսդիրն այս ընդհանուր կանոնից բացառություն չի անում, ուստի և այդ կանոնը կիրառվում է հանցագործության կատարման յուրաքանչյուր դեպքի նկատմամբ, անկախ այն բանից, քրեաիրավական նորմայի դիսպոզիցիայում նշված են հանրորեն վտանգավոր հետևանքները, թե ոչ, մասնավորապես կիրառվում է մեղավոր անձին առավելագույն կամ նվազագույն պատժաչափի նշանակելիս։

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ДОВЕДЕНИЕ ДО САМОУБИЙСТВА

Р. З. АВАКЯН

Резюме

В статье дается уголовноправовой анализ состава доведения до самоубийства — одного из преступлений против жизни.

Исследуются признаки состава этого преступления, предусмотренного ст. 104 Уголовного кодекса Армянской ССР — объект (жизнь человека), объективная сторона (способы совершения преступления), субъект (кто может нести ответственность) и субъективная сторона (формы вины).

Делаются предложения по правильной квалификации данного состава в судебной практике.

¹² И. И. Карпец, Индивидуализация наказания в советском уголовном праве, Госюриздат, М., 1961, стр. 93.